



13. ՄԱՅՄԱՂ - ԲԵԿ

Մահմանդ-Բեկ, էնու գանվգիր կըլնին, կերթան սար: Կերթան կաքանվ պըռնելու: Չուև հեվարին՝ անծրև կը տա վերեն:

Մահմանդ-Բեկ գանվգիրին կասա. - Ես շուտով կերթամ, տու թոռեր քանդա՛, արե՛:

Մահմանդ-Բեկ կը գա, գանվգիր թոռեր կը քանդա, էնու հիտև կը գա:

Մահմանդ-Բեկ կը գա տանջտի մեջ, կը տեսնի՝ մեկ տուև գո տանջտի մեջ շինուկ ա, լամբեքյ հինե կը վառվին:

Կասա. - Շա՛տ աղեկ, ավահի մ՛եղավ, էրթանքյ մըտինքյ հինե չուև խըլխուև, խըլխուև թոնինքյ, էրթանքյ:

Կերթա, տուև կը տըվա: Էն տան մեջն էլ մեկ խանըմ կա, մեկ էնու ախչիկ, մեկ էնու ջառին:

Խանըմ էնու ջառին կը ճանխա՝ գյընա թի ի՞նչ մարթ ա՝ մեր տուև կը տըվա:

Ջառին կերթա, տուև կը պանա, կասա. - Տու ի՞նչ մարթ ես, ի՞նչ կուզես:

Մահմանդ-Բեկ կասա. - Ես Մահմանդ-Բեկն եմ, տուև պա՛ց, գան մերս չուև խըլխուև, իմ խանվըներ անծրևու տակ թանցվան, չորուցիմ, խըլխուև էլնեմ, էրթամ:

Ջառին գյընաց, խանըմին ասաց, թե՛ Մահմանդ-Բեկն ա, անծրև էնու խանվըներ թացի, կասա՝ տուև պացեքյ, գան մերս չուր առավոտուև, կերթամ:

Խանըմ կասա. - Գյընա՛, Մահմանդ-Բեկին ասա՛, թե՛ ծի կովըմ կա, էրինջըմ կա, կովու գյին ի՞նչ ա, էրընջի գյին ի՞նչ ա, խի էնու

կիթ-հարնաքնի ի՞նչ ա, թի խանեց, տու էլ պանց, թը գան ներս:

Գլընաց ջառիմ, ասաց Մահմանդ-Բեկին. – Խանըմ կասա՝ ծի կովըմ կա, էրինջըմ կա, կովու գլին ի՞նչ ա, էրընջի գլին ի՞նչ ա, թի խանեց, թը գան ներս, թի չէ՛ հեչ:

Մահմանդ-Բեկ ասաց. – Կովու գլին խինգ ոսկի կաժի, էրընջու՛ն՝ իրեթյ ոսկի: Կիթ-հարնաքնի էլ՝ շատ-շատ մե խոնդքյարի եղ:

Ջառիմ գլընաց, խանըմին պատմեց, ասաց, թե՛ Մահմանդ-Բեկ էսպես կասա:

Ասաց. – Գլընա՛, ասա՛, էնոր տեղ չըկա ըստա՛, դի՛ր կերթա, թ՛ էրթա:

Չէ՞ անծրև էմալ շատ կը գլեր, Մահմանդ-Բեկ գլընաց, զինքյ էտու ծառի տակ, օր անծրև չըգլեր վերեն: Նըստավ էն ծառի տակ:

Տեսավ Մահմանդ-Բեկ, օր գավգիրն էլ էկավ: Էկավ, գլընաց էտա տուռ տըրփեց: Ամա գավգիր Մահմանդ-Բեկին չըտեսնա:

Խանըմ ասաց. – Ջառի՛, գլընա՛ խի էն վո՞րն՝ ա տուռ կը տըրփա:

Ջառիմ գլընաց, խառցընեց:

Գավգիրն ասաց. – Ես Մահմանդ-Բեկի գավգիրն եմ, տուռ պանցեթյ, գան ներս, չու՛մ խըլխու՛մ էլնեմ, էրթամ:

Մահմանդ-Բեկ էնու մըտքի մեչ կասա. «Ես քու ամիրեն եմ, ծի տեղ չըտըրվին, քյե ի՞նչըխ տը տան»:

Խանըմ կասա. – Ջառի՛, գլընա՛ խառցընա՛, ասա՛ ծի կովըմ, էրինջըմ կա: Կովու գլին ի՞նչ ա, էրինջի գլին ի՞նչ ա: Էնու կիթ-հարնաքնի ի՞նչ ա: Թի խանեց, տուռ պանց, գան ներս: Թի չէ՛ տուռ փակի, արե ներս:

Ջառիմ գլընաց, ասաց. – Խանըմ կասա՛ գլընա՛ ասա՛ ծի կովըմ կա, էրինջըմ կա: Կովու գլին ի՞նչ ա, էրինջին ի՞նչ ա, կիթ-հարնաքնի ի՞նչ ա, թի խանեց՝ առ ներս, թի չէ՛ հեչ:

Գավգիր ասաց. – Գլընա՛, քու խանըմին ասա՛ կովու գլին հիսուն ոսկի ա, էրընջու՛ն՝ խարիր, էնու կիթ-հարնաքնի էլ՝ նա՛՛ ես գլինամ, նա՛՛ քու խանըմ, էնի մեկ Աստված գլինա:

Տուռ պանցին, գավգիր գլընաց ներս:

Մահմանդ-Բեկ ուր խեւթը էթալ:

Ասաց. «Ջահնըմ, ես բեկ մ' եմ, ձի չառին ներս, էսա խեղճ ֆուխարին ի՞նչըխ առին ներս»:

Մահմանդ-Բեկ էլնվ ծառը վե, փանջարից թանաչա կենա, խի՝ գնվգիր մըտավ էն տեղ, ի՞նչ տ'ենա:

Գնվգիր եփ մըտավ ներս, էնու խնվլըներ թաց էր, էնու խնվլըներ խանեցին, դաստըմ լնվ խնվլավ խագուցին:

Խանըմ խընդ գնվգիրին չըզուցի: Մենակ էնու ծեռաց մանդիլ գընտեց, էթնվ գնվգիրի ծընգան վերեն:

Գնվգիր մանդիլ առավ, էտի վըր փետին, թանիզըմ տանկով պըրտեց, էթնվ խանըմի գոքը:

Խանըմ նուռըմ էնու ջեբեն էխան, էթնվ գնվգիրի ծեռ:

Գնվգիր նըռան վիզ տանկով կըտրեց ու էթնվ խանըմի գոքը:

Խանըմ խաց ու չայ պերին, կերան ու խըման, էլնն, չըխըցան, խի գնվգիրին պառկան, էնոնց խամար քյեֆ էրին:

Մահմանդ-Բեկ ծառի վիրվուց տեսավ:

Ինքըյ ուր ասաց. «Գնվգիր, ձի չըթողին գյեր ներս, քյե թողին, առավոտուն խենքը, ի՞նչ օր խես, իմ ծեռենն տը խես»:

Վերճ խըլխուսն Մահմանդ-Բեկ էթող, գըննաց ուր տուն, գնվգիրն էլ՝ էնոր էտն էլնվ, գըննաց:

Մահմանդ-Բեկ գնվգիրին ասաց. - Գնվգիր, էսօր գյիչեր տու դի՞ր էր մընացե:

Ասաց. - Մընացի էն սարի մեչ:

Ասաց. - Սութ կասես, չէ՞ տու գնցիր, մըտար մեկ կոնըխի մեչ, խանըմ կեր էն տեղ: Կերար, խըմեցիր, յնթղի մեչ պառկար խանըմի ծոց:

Ասաց. - Չէ՛:

Մահմանդ-Բեկ տըփեց գնվգիրին: Որքան օր տըփեց, կըսա չէրաց:

Ասաց. - Ֆանդան չէնա, տըփելով պնն չասա:

Առեց ուր գնվգիր, չորս-խինգ խուլամի խետ, տարավ էտա կոնըխի տեմ, կապեց ծառ ու խուլամներուն ասաց. - Թըվանքը գնրկեք, չէ՛ մը գնրկեք էնոր, ընցկո՛ն գնրկեք, օր տիպի էնու կըշտըներ:

Օր թըվընքյի ծեն կը գն, խանըմ փանջարից գըլուխ կը պերա տուս, կը տեսնա՝ էն մարթ, օր գյիչեր էկեր էր, ուր մոտ պառկեր էր, գի կապած ծառ, կը տան թըվընքյի հնռանճ:

Էլնվ, էնու շըմկըներ էցկեց էնու ոսկեր, նուռ էտի ուր ջեբ, գյըննաց խըն էն մարթ:

Գյըննաց, էտա նուռ էզար ծառին, նուռ բըլնվավ գետին, ու հինք տանցավ ետ, չըխոսավ:

Գավգիր ասաց. - Մահմանդ-Բեկ, արի ծի հարծըրա, քե կըսա տ'ընեմ դորսվան:

Մահմանդ-Բեկ էկավ, գավգիր հարծըրեց, ասաց. - Դե', պատմա', խի ի՞նչ ա:

Ասաց. - Եփ օր ես էկա, էտա տառ տըփեցի, ջառին էկավ, ծի խառցնեց խանըմի կողմեն, թե՛ խանըմ կասա ծի կովըմ կա, էրինջ, էնու կիթ-հարնաքնաք ի՞նչ ա: Տիւ չըս կարցե խանե, օր տառ պանեն, տաւ մըտներ ներս: Կով էնոր կասեր, էրինջ էնու ախչըկեն կասեր: Կիթ-հարնաքնաքն էլ զավակի կողմից կասեր: Էնու գյին հիսուն ոսկի օր արժեր, ախչիկ նգաք էր, էնի խարիր ոսկի կարժեր: Էնու զավակի կողմից ասի՝ նա՛ ես գինամ, նա՛ տաւ, էն մեկ Աստված գինա: Էնու խամար տառ պանցին, ես մըտա ներս:

Մահմանդ-Բեկ ասաց. - Գավգիր, ապա է՞ն ինչ չնվրո՞ւ էր՝ էթալ քիւ գիթ, օր ես տեսա:

Ասաց. - Մահմանդ-Բեկ, էն չնվրեն էթալ ծի, ասաց, թե՛ իմ նամուս քալեցի քիւ ծռ: Ես էլ առի չնվրեն, պըրպըրտեցի, խասկըցուցի, թե՛ ծի օր էսպես էլ պըրպըրտին՝ թու մարթիւ կըսա չեմ էներ:

Ասաց. - Ապա էն ի՞նչ նուռ էր՝ էթալ քիւ գիթ:

Ասաց. - Նուռ էթալ, ծի ասաց, թե՛ նըռան խատերու պես տաւ իմ խոսքեր կը բըլնվես, ես էլ նըռան վիզ կըտրեցի, թե՛ չու՞մ վիզն էլ կըտրին, ես մարթիւ չեմ ասե:

Ասաց. - Գավգիր, ապա մըկա ընչի՞ կըսա էրիր:

Ասաց. - Մահմանդ-Բեկ, տաւ ծի կապեցիր ծառ, տըվիր թըվընքի հանճև, ես կըսա չէրի, լե խանըմ էկավ, նուռ էզար ծառին, բըլնվավ, տեմակ ծի ասաց՝ իմ խոսքեր բըլնվա, նոր ես իմ խոսքեր քե կըսա էրի:

Մահմանդ-Բեկ ասաց. - Էտպես կնիկ ըսկի մեկ տեղ չըկա:

Մեկ մարթ էն տեղեն ասաց. - Մահմանդ-Բեկ, ես կնիկ տեսեր եմ, օր էնի խըն էնու կեսն էլ չէրի:

Մահմանդ-Բեկ ասաց. - Պատմա՛ խի՛ ի՞նչըրս ա քիւ տեսած կնիկ:

Մարթն ասաց. - Ես ճանաչում եմ կերթեր, տեսա մեկ անբեղ, անմուրուս երիտասարդը, խեղճ ծիս վերեմ, էկավ, ծի խասավ, խընդորաց ճանաչում կերթանք: Իմ աչք մընաց էնու ծիմ, էնու խնայվըներ, թուր մ'էլ կապուկ էր էնու վերեմ: Չոմախըմ պըռնիր ի իմ ծեռ, օր ես ինորով ինչ մարթու օր գաներ, կը մեռներ էն մարթ: Ես էլ ինչ մըտածեցի, ասի չոմախըմ գանեմ, էսա տըղին ըսպանեմ, էնու ծիմ ու շորեր առնեմ ծի: Ես չոմախ գանրկի էտու վըզին, լե էնու մոտ լըվի'մ կըծելու չնափ էլ չարծեց, մեռակ ետ տանցանվ, իշկաց ծի, ասաց. «Ես մըկա կանամ քե մեկ դըրբի պան էնեմ, հանա ինչ ֆանդա, ես ուխտի կերթամ, էնու խամար ես ծեռ չըմ էնե»: Մանանդ-Բեկ, ես գարմացա, իմ դըրբ վիր գաներ, կը մեռներ, էտա երիտասարթի մոտ փարե'մ չերաց: Վերճ՝ ճանաչում գանցիք, ես էնու մոտեմ կը ջոկվեր, էն չըթող:

Ասաց. - Չէ, տու կա'ց, քու աչք մընացե իմ խնայվըներ, իմ ծիմ:

Չի առավ, տարավ մեկ կանալ՝ ոչ տուռ ուներ, ոչ պան մ'ուներ, ծիուց ծի էճուց տակ, տարավ, կայնանք պերթի մոտ, ուր հայրից երկըթե չըվի էխան տուս, էտու ծի:

Ասաց. - Դե, էսա չըվին գան'ր պատ վե, էրա թանանջա, օր ես էլնիմ պերթ:

Ես ինչքան գանրկի, էտա չըվին չըմտավ պատ:

Ինքըն իմ ծեռեմ առավ, իտիր պատին, գոմփով էգար, մըտուց պատ վե:

Տանցավ ծի, ասաց. - Մա'րթ, իմ ծիու գան պըռնի', կայնի' էսա տեղ: Ես կերթամ, կը մոտիմ էսա պերթի մեջ, թե շատ կալաբալըղ էկավ, պանակ ծուխըմ էկավ, տու գյինաս՝ ես կը գան: Թե կալաբալըղ էկավ, էկավ, ծուխ չէկավ, ա'ռ իմ ծիմ, գըռնա, գիտնաս, օր ծի ըսպանած են:

Ինքըն էլնվ, մտավ ներս, շատ կալաբալըղ էկավ, էկավ, պանակ ծուխ մ' էկավ:

Ասի. - Վոլլա, կը գան:

Տեսա, օր էկավ, էճավ տակ, պանըմ, փետատ մ' էլ էպեր խետ:

Էտա պերթի տիմաց, միքան մեկ մարթու գյերեգմանըմ կեր: Էտա փետատ ու պան էտու իմ ծեռ:

Ասաց. - Էսա գյերեգմընի կըշտին գյերեգման մ'էլ փորա:

Գյերեզմընատուն փորեցի, ասի՝ վուլա, էսի ծի տը խորա
իմն:

Ասաց. - Պառկի հիմն, խի անո՞ւշ ա:

- Մահմա՛դ-Բեկ, ես վախեցա, ասի էսա մարթ ծի տը տընա
գյերեզման:

Վերչ ինքն ուր թուր քաշեց, տանցնավ իմ վերեն, ասաց. -
Մարթ, դե, ծին կը տամ քյե, իմ շորեր կը տամ քյե, ֆակաթ ես
կնիկ, ես ծի կը սպանեմ, խող տաս վեր ծի, չեղի օր իմ մախից
վերճ խըն ծի գեշ պան էնես:

Ասի. - Ջանըմ, տու հե՞ր քյեզ կը սպանես:

Ասաց. - Թա՛ժա օր ծի նըշանած են, հալա իմ իրիկ իմ կուշտ
չըպառկե: Էտա պերթու միճու մարթեր իմ իրիկ ըսպանած են, էսա
գյերեզմընատուն իմ իրկան գյերեզման ի: Էն օր, օր ես լըսեցի,
թե իմ իրիկըս պըռնած են, ասի՝ ես տ'երթամ իմ իրկան փոխն
առնեմ, էնտուց վերջ աշխըրի խաց ծի խարամ ի մընացե:

Ձինքը ըսպանեց ու ասաց. - Դե՛, ծի խորա՛, իմ ծին, շորեր
տա՛ր:

- Մահմա՛դ-Բեկ, ես էնի խորեցի, լավ մ'էնու գյերեզմընա-
տուն շինեցի, ասա ծին ու խալվըներ պերի ծի: Մահմա՛դ-Բեկ,
եմալ կնիկ կեղի, տու էմալ կնիկ իսկի տեսե՞ր ես:

Ամիրեն ասաց. - Ափսո՛ս էն կնիկ, օր զինքը ըսպանեց:

